1920Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ս.Մ.ՔԱՌՅԱՆ

1920թ. աշնան Թուրք-հայկական պատերազմը հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի ողբերգական փուլերից է: Անկասկած, 1915թ. Մեծ Եղեռնից հետո տեղի ունեցած այս նոր արհավիրքը հայ ժողովրդից խլեց հազարավոր զոհեր, պատճառեց ահռելի նյութական վնասներ, և ամենակարևորը՝ դրա հետևանքով անկում ապրեց Հայաստանի անկախ պետականությունը:

Առաջին հայացքից պատերազմի սկսվելը և հատկապես նրա արդյունքը տարակուսելի էին: Փաստորեն, Առաջին աշխարհամարտում կրած խայտառակ պարտությունից հետո, թվում էր, որ Օսմանյան կայսրությունն անվերադարձ փլուզվել էր: Այս ամենից զատ, Անտանտի տերությունների հաղթական արշավը և նորահռչակ Հայաստանի միացումն այդ բլոկին իրական հույսեր էր ներշնչում արևմտահայ նահանգների ազատագրման և հայկական պետականության սահմանային ընդլայնման ուղղությամբ: Սակայն, երբ եկավ հայ ժողովրդի համար օրհասական այդ պահը՝ նույնիսկ հանրապետության ղեկավարության համար անսպասելի ձևով, նրա նախկին դաշնակիցները և հովանավորները խոսքերը մեկ արած երես թեքեցին և իրենց հույսին ապաստանած «փոքր դաշնակից» Հայաստանին քեմալական հորդաների դեմ բախտի քմահաճույքին ձգեցին:

Քեմալական շարժման ծավալումը, Արևմուտքի քամահրական, հաշվենկատ վերաբերմունքը, Ռուսաստանի որոշակի աջակցությունը Թուրքերին, Վրաստանի անհոգի «չեզոքությունը» և Հայաստանի Հանրապետության ներպետական ու բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտն ու պատերազմին անպատրաստ, «հանգստացած» կեցվածքը հանգեցրեցին 1918թ. մայիսյան հերոսամարտերով նվաճված պետականության կորստին:

Եթե բնորոշելու լինենք հարցի վերաբերյալ մինչև 1980-ական թվականները կատարված աշխատանքները, ապա դրանցում հարցին անդրադարձել են որպես կանոն մակերեսորեն: Հարցի պատմությունն ուսումնասիրողները գերազանցապես խնդրին մոտեցել են կուսակցական-դասակարգային դիրքերից և հաճախ կողմնապահ դիրքորոշում ցուցաբերել: Դրա հետևանքով, չնայած այս պատերազմի մասին պատմագիտական և հուշագրական որոշակի գրականության գոյությանը, այն ճշգրիտ, ամփոփ գնահատման գրեթե չի արժանացել:

Նախ և առաջ անդրադառնանք քեմալական շարժման գնահատման հարցերին: Այդ մասին մասին ուշագրավ և հետաքրքիր աղբյուրներից են Մեվլան Զադե Ռիֆաթի հուշերը:[1] Նա հիմնավոր ապացուցում է, որ քեմալական շարժումը ծրագրվել ու նախապատրաստվել էր սուլթանական կառավարության կողմից և հետապնդում էր միայն մեկ նպատակ՝ արգելել Օսմանյան

---

[1] *Մեվլան Զադե Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Պեյրութ, 1968 և վերահրատարակությունը՝ Ե., 1991:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

կայսրության արևելյան նահանգներում հայկական անկախ պետության ստեղծմանը:

Հայաստանի նկատմամբ պանթուրքական նվաճողական քաղաքականության դրսևորման ուղղակի վկայություններ կան Մուստաֆա Քեմալի հուշերում և ելույթներում, որտեղ պարունակված ուշագրավ նյութերն ուղղակի ապացուցում են ինչպես քեմալական շարժման ռեակցիոն բնույթը, այնպես էլ 1920թ. հայ-թուրքական պատերազմի ժամանակ թուրքերի հիրավի նվաճողական նկրտումները:[2]

Ինչ խոսք, քեմալական շարժումն ուներ երկակի՝ մի կողմից օտար տիրապետության դեմ պայքարի արդարացի բնույթ, և մյուս կողմից՝ ոչ թուրք ժողովուրդների պատմական իրավունքների ըստ ամենայնի ճնշման և թուրքական ամբողջատիրության պահպանման ձգտում: Քեմալականները ծայրահեղորեն դեմ էին ոչ թուրքերի ազգային ինքնորոշմանը: Անհրաժեշտ է նշել, որ խորհրդային առանձին թուրքամետ պատմաբաններ քեմալական Թուրքիայի մասին խոսելիս մեղանչում են պատմական ճշմարտության դեմ՝ քեմալական շարժումը բնորոշելով միմիայն սոսկ որպես հակաիմպերիալիստական շարժում:[3]

Մինչդեռ, ժամանակին Վ. Լենինը քեմալական շարժման մեջ տեսնում էր նաև մեկ այլ կողմ՝ նրա զավթողական ձգտումները Հայաստանի և Անդրկովկասի նկատմամբ, Ռուսաստանի հանդեպ քեմալականների երկդիմի, երկերեսանի քաղաքականությունը:[4]

Հայ հեղինակները, իրավացիորեն ընդգծելով քեմալական շարժման պայքարը արևմտյան իմպերիալիզմի դեմ, որը պաշտպանվում էր Խորհրդային Ռուսաստանի կողմից, միաժամանակ ցույց են տալիս նրա՝ հայ և մյուս ոչ թուրք ժողովուրդների ազատագրական շարժման ճնշման, Հայաստանի հանդեպ նրանց նվաճողական ծրագրերը:[5]

Քեմալական շարժման լավագույն գնահատականներից մեկը տրվել է և հիմնավորապես ներկայացվել ու վերլուծվել Գ. Ղարիբջանյանի և Ե. Սարգսյանի կողմից:[6] Նրանք իրենց տեսակետները հիմնավորում և խորհրդային պատմագիտության մեջ առկա սխալ դիրքորոշումը քննադատում են Վ. Լենինից կատարված մեջբերումներով: Այսպես, Վ. Լենինը, բնութագրելով Թուրքիայի իշխողների դասակարգային էությունը, նշում էր. «Թուրքիայի վերնախավում կանգնած են կադետները, օկտյաբրիստները, ազգայնականները, որոնք պատ-

---

[2] М.Кемаль, Путь новой Турции, т. 1-4, М., 1930-1934. Кемаль Ататюрк, Избранные речи и выступления, М., 1996.

[3] Տե՛ս, օրինակ, Всемирная история, т. 8, М., 1961, с. 452-454 (Հեղինակ՝ Ա.Միլլեր):

[4] Ленинский сборник, М., 1959. с. 131.

[5] Տե՛ս, օրինակ՝ Р. Хачатрян, Кто такие кемалисты?, (Коммунист, 1952, N 117), Ա.Ն.Մնացականյան, Ռևոլյուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները, Ե., 1961, էջ 128-139; Ե.Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Ե., 1964, էջ 438, Г.А.Галоян, Рабочее движение и национальный вопрос в Закавказье, Е., 1969, с. 388.

[6] Г.Б.Гарибджанян, Е.К.Саркисян, К вопросу о характере национально-освободительной войны в Турции в 1919-1922гг. ВАА, 1982, N 3, с. 160-173.

բաստ են մեղ հանձնել Անտանտին»:[7] Նոր փաստերի և աղբյուրների հիման վրա նրանք ապացուցում են դեռ 1919թ. և 1920թ. սկզբին Հայաստանի վրա հարձակվելու Մ. Քեմալի ծրագրի գոյությունը:

1919-1920թթ. հայ-թուրքական հարաբերությունների ուսումնասիրության բնագավառում զգալի ներդրում ունի Ե. Սարգսյանը, որի աշխատանքները՝ պատմագիտական խոր վերլուծությամբ, նյութի բազմակողմանի իմացությամբ, մնայուն տեղ ունեն նաև ընդհանուր թուրքագիտության ասպարեզում:[8] Նա Ռ. Սահակյանի հետ տվել է 1918-1921թթ. Հայաստանի պատմության և հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ թուրքական պատմագիտության՝ փաստերով հարուստ և կուռ տրամաբանության վրա կառուցված, համակարգային քննադատություն:[9]

Պատմագիտական աշխատությունների վերլուծումից առաջ ներկայացնենք թեմայի վերաբերյալ հուշագրությունները:

Հանրապետության խնամատարության նախարար Արտաշես Բաբալյանի հուշերը կարևոր են որպես ականատեսի վկայություններ:[10] Նա առանձնապես մեղադրում է զինվորական հրամանատարներին և որպես հայկական բանակի պարտության պատճառներ նշում թուրքական վտանգի անտեսումը, և սեփական ուժերի գերագնահատումը, զորքի և բնակչության պարտվողական հոգեբանությունն ու առկա ներքին հակամարտությունը, բոլշևիկյան քայքայիչ քարոզչությունը և այլն: Նա դեմ է այն մոտեցմանը, որ իբր բանակն ու ժողովուրդը չուզեցին կռվել և թերագնահատում է կռվելու տրամադրվածության բացակայության փաստը:

Սփյուռքահայ հեղինակներից Կարո Սասունին, քննելով հայկական բանակի պարտության պատճառները, նշում է թուրքական զորքի համեմատաբար լավ պատրաստվածությունը, կարգապահությունը, փորձառությունը, բարձր ոգին և նվիրվածությունը, հայկական հրամանատարության անպատասխանատու կեցվածքը և խուճապային տրամադրությունը, դաշնակիցների կողմից հայերին լքելը, բոլշևիկների քարոզչությունը[11]:

Կարևոր հուշագրական աղբյուր են Հայ Գնդունիի (Համբարձում Թովչյան) երկու հուշերը:[12] Ռազմական գործողությունների անմիջական մասնակիցն իրավացիորեն Կարսի անկումը համարում է «մեր նորագույն պատմութեան ամենէն ցնցող և ճակատագրական դէպքերէն մէկը», որի «պարզաբանութիւնն ու քննադատութիւնը՝ վերապրող հայութեան, իւր յառաջադեմ սերունդին ու մտավորականութեան գերագոյն պարտականութիւնն

---

[7] Коммунист, М., 1963, N 6, с. 8.

[8] Տե՛ս օրինակ՝ Е.К.Саркисян, Великая Октябрьская социалистическая революция и национальная война в Турции, 1918-1922 гг., ВАА, 1967, N 3, с. 153-174.

[9] Ե.Սարգսյան, Ռ.Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Ե., 1963, սրա լրացումը՝ նույնի, Հանուն պատմական ճշմարտության (Երեկոյան Երևան, 9. VI.1988); Е.К.Саркисян, Из истории Армении 1918-21гг. в освещении турецких авторов (Литературная Армения, 1991, N 8 с. 91-103).

[10] Ա.Բաբալեան, Կարսի անկումը, Հայրենիք, Բոստոն, 1923, N 12:

[11] Կ. Սասունի, Հայ-թուրքական պատերազմը, Հայրենիք, Բոստոն, 1926, N 4-9, 11, Բեյրութ, 1969:

[12] Հայ Գնդունի, Դրուագներ Կարսի կռիւներէն (Պայքար, Բոստոն, IX. 1931, էջ 77-85), Կարսի անկման պատճառները (Մարտկոց, Փարիզ, 29.X - 10.XI. 1932):

է»:[13] Նա իր հուշերում Կարսի անկման պատճառներին անդրադառնում է զուտ «ռազմագիտական և մարտական» տեսակետներից, առանց քննելու հարցի քաղաքական և դիվանագիտական կողմերը՝ թեպետև դրանք չափազանց կարևոր համարելով: Հեղինակը նշում է հայկական բանակի պարտության մեկ տասնյակից ավելի պատճառներ, որոնք են՝ չկռվելու տրամադրվածությունը, բանակում տիրող անկարգապահությունը, բարոյահոգեբանական անկումային վիճակը, քաղաքացիական և զինվորական իշխանությունների համագործակցության բացակայությունը, հանրապետության ղեկավարության «նահանջական և պարտուղղական հոգեբանությունը», կատարյալ անպատրաստվածությունը, հետախուզության բացակայությունը, սխալ ռազմավարությունը:

Կարսի անկման մասին հուշերից հարկ է հիշատակել Գարեգին Հովսեփյանցի հուշագրությունը, որը ներկայացնում է հարցի ողջ ողբերգականությունը:[14]

Ականատեսների հուշերից նշենք նաև Արտաշես Ալեքսանդրյանի գիրքը:[15] Նա Կարսի անկման ողջ պատասխանատվությունը գցում է զինվորների դասալքության և դրա պատճառ «աշխատավորների գլխին պատուհաս դարձած և հակասովետական մոլուցքով կուրացած դաշնակցական կառավարողների» ու սպայության վրա:[16]

Խորհրդահայ պատմագիտության մեջ Թուրք-հայկական պատերազմին առանձին աշխատությամբ առաջինն հատուկ անդրադարձել է Սարիբեկ Կարապետյանը:[17] Նա քննվող հարցի հետ կապված բոլոր պարագաները պայմանավորում է Ռուսաստանի կառուցողական դիրքորոշմամբ: Նման մոտեցումից ելնելով՝ նա շեշտում է, որ «դաշնակցականները իմպերիալիստների թելադրանքով դժբախտաբար հրաժարվեցին Հայկական հարցի լուծման սովետական առաջարկից և ընդունեցին Սևրի պայմանագրի ազգակործան քաղաքականությունը, որի հետևանքով 1920թ. աշնանը հայ ժողովուրդը կանգնեց իսպառ ոչնչացման վտանգի առջև»: Նա դաշնակցականներին մեղադրում էր այն բանում, որ նրանք հայկական հողերը ուզում էին միավորել «ավանտյուրիստական մեթոդներով, իմպերիալիստների «օժանդակությամբ» պատերազմի միջոցով, նույնիսկ սեփական ուժերով»[18]:

Ուշագրավ է պատերազմի պատճառների և ընույթի ուսումնասիրումը:[19] Հեղինակն իրավացիորեն նշում է, որ թեև Թուրքիայի հարձակման նպատակները խորհրդահայ պատմագիտության կողմից «տարբեր ձևերով շոշափվել են», սակայն այդ հարցն իր «համակողմանի լուծումը չի ստացել», քանզի «բազմակողմանիորեն չեն պարզաբանվել Թուրքական զավթիչների գաղափարական և արշավի հակասովետական պլանները»: Նա իրավացիորեն շեշտում է սուլթանական-քեմալական քաղաքականության ժառանգորդությունը և շարունակականությունը: Ուշագրավ է հեղինակի այն միտքը, ըստ որի 1919-1920թթ. քեմալականներն իրենց «ձևացնում էին հեղափոխականներ», որոնք

---

[13] Մարտկոց, 29.X.1932, էջ 1:

[14] Գարեգին Յովսէփեանց, Կեանքիս ամենադժբախտ օրը և երջանկութեանս ոսպէն, Անթիլիաս, 1982: Տե՛ս նաև՝ Ոգուն չապաւինելու արդիւնքը, Ե., 2002:

[15] Ա. Ալեքսանդրյան, Կարս. 1920-21, Ե., 1986:

[16] Նույն տեղում, էջ 25:

[17] Ս.Խ.Կարապետյան, 1920թ. հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Եր., 1965:

[18] Նույն տեղում, էջ 10:

[19] Ս.Խ.Կարապետյան, նշվ. աշխ., էջ 14-34:

«իբրև թե պայքարում են իմպերիալիզմի դեմ և սովետական կառավարության համակրանքը չարաշահելով, պանթուրքիզմի ու հակասովետական պրոպագանդա էին մղում»:[20]

Ս. Կարապետյանն այն հիմնավոր կարծիքն է փաստում, որ 1919-1920թթ. Թուրքիան այն չափի նախապատրաստական աշխատանքներ էր տարել, որ արդեն 1920թ. գարնանը պատրաստ էր Հայաստանի վրա հարձակվելուն: Միանշանակ ճիշտ է հեղինակը, որ պատերազմը Թուրքերն են սկսել և առաջինը հարձակվել հայերի վրա: Նա այդ միտքը հաստատում է նաև ֆրանսիական աղբյուրներով: Այս հարցի առթիվ նա քննադատում է այն խորհրդային պատմաբաններին, որոնք պատերազմի պատճառ համարում էին դաշնակցականներին: Մասնավորապես, Ա. Միլլերը «Համաշխարհային պատմության» 8-րդ հատորում ձգտում է հաստատել, որ իմպերիալիստները դաշնակցական Հայաստանին դրդեցին պատերազմելու Թուրքիայի դեմ: Ս. Կարապետյանն իրավացիորեն շեշտում է, որ Միլլերն իր պաշտպանության տակ է վերցնում և «կոծկում քեմալականների ռեակցիոն, հայաջինջ քաղաքականությունը»:[21]

Նշենք նաև, որ Թուրքիայում խորհրդային դեսպան Ս. Արալովը ևս նախահարձակ կողմ է համարում Հայաստանին:[22] Իսկ արդեն Ա. Խեյֆեցը նախ անհիմն հայտարարում է, թե պատերազմը սկսեցին դաշնակցականները և ապա ինքն իրեն հակասելով հայտարարում, որ «իմպերիալիստների ինտրիգները և դաշնակների պրովոկացիոն գործողությունները» ստիպեցին Թուրքերին պատերազմ հայտարարել դաշնակներին:[23]

Այս սխալ տեսակետն առաջ է քաշվել նաև քաղաքացիական կռիվների պատմության մասին բազմահատորյակում, ըստ որի, «դաշնակները Անտանտի դրդմամբ և օժանդակությամբ զինված ելույթ կազմակերպեցին Թուրքիայի դեմ»:[24]

Խորհրդային պատմաբանների աշխատանքներից անդրադառնանք նաև Դ. Զավրիևի գրքին: Աշխատության երկրորդ մասում նա ներկայացնում է 1920-1921թթ. Անդրկովկաս Թուրքերի կատարած արշավանքը:[25] Հիմնազուրկ է հեղինակի այն տեսակետը, ըստ որի, Թուրքերի հետ պատերազմը «ձեռնտու էր դաշնակներին, քանզի Հայաստանը այդ ժամանակ ապրում էր ծանր ճգնաժամ, և դաշնակները փնտրում էին փրկությունը ռազմական արկածախնդրությունների մեջ»: Նա գտնում է, որ «դաշնակ արկածախնդիրների ելքը մեկն էր՝ Արևմուտքի իմպերիալիստների օգնությամբ Թուրքերի դեմ պատերազմ սկսել, իր տարածքը «մաքրել» Թաթարներից ու քրդերից և ստեղծել «զուտ ազգային» պետություն: Մյուս կողմից, նրա կարծիքով, պատերազմի օգնությամբ Հայաստանի ղեկավարները հույս ունեին ժողովրդին չեղել հասունացող

---

[20] Նույն տեղում, էջ 20:

[21] Նույն տեղում, էջ 24: Տե՛ս նաև՝ А.Ф.Миллер, Краткая история Турции, М., 1948. Очерки новейшей истории Турции, М., 1983.

[22] С.И.Аралов, Воспоминания советского дипломата, М., 1960, с. 27.

[23] А.Н.Хейфец, Советская Россия и сопредельные народы Востока, М., 1964, с. 131.

[24] История гражданской войны СССР, т. 5, с. 236.

[25] Д.С.Завриев, К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тб., 1947, с. 78-112.

հեղափոխական ճգնաժամից և նրան լարել բոլշևիկների դեմ:[26] Նման դիրքորոշմամբ հանդերձ, հեղինակը հետագա էջերում ներկայացնում է քեմալական վարչակարգի դասակարգային էությունը և ազգային քաղաքականությունը՝ հատկապես ուղղված հայ բնակչության դեմ:[27] Դ. Զավրիևի աշխատության դրական կողմը պետք է համարել հայ ժողովրդի կրած զոհողությունների վիճակագրական տվյալների ներկայացումը:

1920թ. հայ-թուրքական հարաբերությունների թեման քննարկված է նաև Ա. Կադիշևի աշխատությունում:[28]

Այսպիսով, խորհրդային պատմագիտության մեջ իրենց շեշտված թուրքամետ և միաժամանակ հակագիտական մեթոդներով ու հակահայկական տրամադրվածությամբ առանձնանում են Ա. Միլլերը և Ա. Խեյֆեցը:

Արժանիորեն քննադատելով նրանց տեսակետները՝ Ս. Կարապետյանը միանշանակ շեշտում է. «Հայաստանը պատերազմի պատրաստ չէր: Հայ-թուրքական պատերազմը սկսեց Թուրքիան: Նա էր, որ իմպերիալիստների թույլտվությամբ առաջինը հարձակվեց Հայաստանի վրա»:[29] Վերլուծելով պատերազմի բնույթը՝ հեղինակն իրավացիորեն նշում է, որ հայերի դեմ թուրքական արշավանքը պետք է համարել «իմպերիալիստական, զավթողական, անարդարացի»: Իսկ արդեն Հայաստանի կողմից պատերազմը Թուրքիայի դեմ պետք է համարել «արդարացի և պաշտպանողական պատերազմ՝ իր երկիրը ներխուժած թալանչիների, նվաճողների, ճնշողների դեմ, իր հողի և հայրենիքի համար»: Պատերազմը դիտարկելով լայն համապատկերում՝ Ս. Կարապետյանն այն համոզմանն է, որ Թուրքիայի արշավը դեպի Հայաստան «լոկալ երևույթ» չէր, նախապատրաստվել էր Թուրքիայի ու իմպերիալիստական պետություն-ների կողմից և ուներ «շատ հեռուն տանող նպատակներ, իսկ Թուրքիայի կողմից Հայաստանի գրավումը միայն մի օղակն էր այն ամբողջ շղթայի, որի նպատակն էր գրավել Անդրկովկասը և այն ռազմական հենակետ դարձնել Հայաստանի դեմ: Նշելով թուրքական զինուժի կրկնակի գերակշռության փաստը՝ 60 հազարն ընդդեմ 30 հազարի, հեղինակը, միաժամանակ, անաչառո-րեն նշում է հայկական բանակի անհաջողությունների պատճառները. «սպայա-կան կազմի և շարքայինների միջև գաղափարական միաբանության բացակայու-թյունը, սպայության և խմբապետների միջև եղած անհավասարությունը, վերջապես, հրամանատարական կազմի ապիկարությունն ու ռազմական գործին թույլ տիրապետելը»:[30]

Անդրադառնալով հայկական բանակի ոչ մարտունակությանը, բարո-յալքված և դասալիք լինելուն՝ հեղինակը նշում է, որ «ամենամեծ ճշմարտությունն այն էր, որ դաշնակները հենց իրենք էին բարոյալքում զինվորներին՝ իրենց տգիտությամբ, իրենց հորինած «ռուս-քեմալական», «բոլշևիկ-թուրքական» բլոկների հակասովետական ագիտացիայով: Նրա կարծիքով, հայ զինվորներն այդ ամենից եզրակացնում էին, որ եթե «Թուրքերը բոլշևիկների դաշնակիցներն են, ապա չպետք է կռվել Թուրքերի դեմ»: Այս տեսանկյունից ուշագրավ է հիշյալ տրամադրությունների սխալ ընկալման և

---

[26] Նույն տեղում, էջ 82-84:

[27] Նույն տեղում, էջ 113-164.

[28] А.Б.Кадишев, Интервенция и гражданская война в Закавказье. М., 1960.

[29] Ս.Խ.Կարապետյան, նշվ. աշխ., էջ 26:

[30] Նույն տեղում, էջ 30-31:

ներկայացման քննադատությունը: Ըստ Ս.Կարապետյանի, Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարները «ճիշտ չհասկացան քեմալականների քաղաքական խարդախությունները, քեմալական շարժման երկդիմությունը, նրա ռեակցիոն-իմպերիալիստական և ազգային-բուրժուական կազմը»: Ավելին, նրանք քեմալական շարժումը «ազատագրական» համարելով՝ քեմալականներին սկսեցին պրոպագանդել որպես «բոլշևիկների դաշնակիցներ, սովետական իշխանության կողմնակիցներ»: Իսկ արդեն «այդ սխալ ագիտացիայի հետևանքով» Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիները «աղ ու հացով» էին դիմավորում թուրք ասկյարներին:[31]

Կապված պատերազմի կարգավորման հարցի հետ՝ Ս. Կարապետյանն առանձին ներկայացնում է այն խաղաղ ճանապարհով լուծելու ուղղությամբ Ռուսաստանի պայքարը:[32] Հեղինակի միանշանակ համոզմամբ, «հայ ժողովրդին ֆիզիկական ոչնչացումից փրկելու միակ ելքը Սովետական Ռուսաստանից ռազմական օժանդակության պահանջն էր և նրա հետ դաշինքի մեջ մտնելը», ինչը մերժվեց դաշնակների կողմից: Ըստ այդմ, նրա կարծիքով, «պատմականորեն անհրաժեշտ դարձավ դաշնակների իշխանության տապալումը»: Նրա համոզմամբ, Ռուսաստանը «բոլոր միջոցները» գործադրեց պատերազմը դադարեցնելու և վիճելի հարցերը իր մասնակցությամբ բանակցություններով լուծելու համար: Նա նաև նշում է Բ. Լեգրանի առաքելության վարած «կարևոր» բանակցությունների մասին:[33]

Ս. Կարապետյանի աշխատության ուշագրավ մաս պետք է համարել պատերազմի ժամանակ և հետո թուրքերի կատարած ավերածությունների ու դրանց դեմ Սովետական Հայաստանի միջոցառումների և բողոքների մասին, ինչպես նաև Ալեքսանդրապոլի գավառի ազատագրման մանրամասն պատմության շարադրումը:[34]

Ընդհանուր առմամբ, չնայած համառոտ լինելուն և ոչ խոր վերլուծությանը, Ս. Կարապետյանի ուսումնասիրությունը զգալի քայլ էր քննվող պրոբլեմի լուսաբանման բնագավառում:

Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակում այս թեման շաղկապված է ռուս-հայկական բանակցությունների հարցի հետ:[35] Այդտեղ միանշանակ նշվում էր, որ քեմալական շարժումն «ընդհանուր առմամբ լինելով հակաիմպերիալիստական, Անդրկովկասում հետապնդում էր նվաճողական նպատակներ»: Բարձր գնահատելով հայ-թուրքական հարաբերությունների և տարածքային խնդիրների լուծման խնդրում Ռուսաստանի դերը՝ խստությամբ քննադատվում է Հայաստանի ճակատագրի հանդեպ Անտանտի տերությունների որդեգրած դիրքորոշումը, եզրահանգվում է, որ պատերազմում «դաշնակցական կառավարությունը» պարտություն կրեց, որը ապացուցեց նրա քաղաքականության «ամբողջ սնանկությունը»:[36]

---

[31] Նույն տեղում, էջ 31-32:
[32] Նույն տեղում, էջ 33-34:
[33] Նույն տեղում. էջ 35-39:
[34] Նույն տեղում, էջ 47-56:
[35] Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Ե., 1967, էջ 95-112:
[36] Նույն տեղում, էջ 105:

Ակադեմիկոս Հ. Սիմոնյանն այս հիմնահարցը ներկայացրել է իր երկու հիմնարար աշխատություններում:[37] Նա շատ հանգամանալից ներկայացնում և վերլուծում է քեմալական շարժման գաղափարախոսությունը, նրա քաղաքական նկրտումները, տալիս քեմալիզմի իրական և արդարացի գնահատականը: Համոզված ենք, որ նրա աշխատություններն իրենց մեթոդական սկզբունքներով և պատմագիտական խոր վերլուծությամբ թեմայի համալիր պատկերացման ու ընկալման առումներով ուղենիշ կարող են լինել:

Խորհրդային պատմագրության մեջ այս հիմնահարցին անդրադարձել է նաև Էդ. Զոհրաբյանը:[38] Նա քննարկել է Ռուսաստանի արևելյան քաղաքականության, քեմալական շարժման ընդգծված հակահայկական էության, խորհրդային միջնորդության դերակատարման և Թուրք-հայկական պատերազմի հարցում Անտանտի տերությունների դիրքորոշման հարցերը[39] և հիմնավորված քննադատել Թուրք պատմաբանների հակագիտական տեսակետները: Էդ.Զոհրաբյանը նաև ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է 1920թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրման ռազմաքաղաքական պայմանները, ներքաղաքական-դիվանագիտական կապերի խորքային պարագաները և դրա ունեցած հետևանքները:[40] Այդ ամենն արվել է արխիվային նոր փաստաթղթերի օգտագործմամբ:

Էդ.Զոհրաբյանի այդ աշխատությունը հայ պատմագիտության մեջ Ալեքսանդրապոլի պայմանագրի վերաբերյալ լավագույն վերլուծություններից մեկն է, որը, չնայած խորհրդային մեթոդոլոգիական դիրքորոշմանը, համակողմանիորեն հաջողված աշխատանք է:

Հետագայում նա այս թեմային անդրադարձավ հատուկ աշխատությամբ[41], որը նախօրոք հրատարակվել էր մամուլում:[42] Եթե նախկինում նա օգտագործում էր «հայ-թուրքական պատերազմ» ձևակերպումը, ինչը սխալմամբ արմատավորվել է պատմագիտության մեջ, ապա այս աշխատությունում իրավամբ արդեն շրջանառության մեջ է դնում «Թուրք-հայկական պատերազմ» արտահայտությունը: Էդ. Զոհրաբյանը թեման ներկայացնում է համակարգված, անդրադառնում գրեթե բոլոր հարցերին և ձգտում դրանց տալ բավականին սպառիչ գնահատականներ ու պատասխաններ: Պատերազմի «ճշմարտացի ուսումնասիրությունը, մեր ժողովրդի կրած պարտության պատճառների վերհանումը» դիտարկելով արդիական դիրքերից՝ նա եզրակացնում է, որ այդ ամենն «օդի ու ջրի պես պետք է կրկին անկախության դրոշակ պարզած մեր ժողովրդին»:[43] Քննելով քեմալական շարժման ակտիվացման միտումները՝ նա նշում է դրա հակահայկական ուղղվածությունը, «անթաքույց թշնամանքն ու ատելությունը Հայաստանի

---

[37] Հ.Ռ.Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Ե., 1986, նույնի՝ Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991:

[38] Է.Ա.Զոհրաբյան, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, Ե., 1979:

[39] Նույն տեղում, էջ 12-91:

[40] Նույն տեղում, էջ 92-171:

[41] Է.Ա.Զոհրաբյան, 1920թ. Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Ե., 1997:

[42] Երեկոյան Երևան, 1990, հոկտեմբեր-1991-փետրվար:

[43] Է.Ա.Զոհրաբյան, 1920թ. Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 8:

նկատմամբ», ներկայացնում Հայաստանի դեմ քեմալական-մուսավաթական համագործակցությունը: Պետք է համաձայնվել նրա այն դիտողության հետ, որ «թե՛ թուրք քեմալականները, թե՛ աղերի բոլշևիկները Հայաստանի հարցում միևնույն քաղաքական որդեգրումն ունեին, որ ժառանգել էին իրենց նախորդներից, երիտթուրքերից ու մուսավաթականներից: Դա անհապաղ նրա վրա հարձակումը, նրա տարածքների զավթումը և որպես պետություն նրա ոչնչացումն էր»:[44] Հեղինակը Մ. Քեմալի խոստովանություններով փաստարկում է, որ 1920թ. ամռանը Հայաստանի վրա ծրագրված թուրքական արշավանքը կանխվեց Ռուսաստանի դիրքորոշման պատճառով: Այն թեպետ կանխեց, բայց «ամբողջովին չվերացրեց հայ ժողովրդին սպառնացող աղետը», քանզի քեմալականներն արշավը «կանգնեցրեցին այն հետո վերսկսելու» նպատակով:[45]

Դիտարկելով պատմագիտության մեջ որոշ չափով ամրապնդված այն կարծիքը, ըստ որի, եթե խնդիրը դիվանագիտական ճանապարհով լուծվեր 1920թ. ամռանը, ապա որոշ արևմտահայ տարածքներ կմիանային Հայաստանի Հանրապետությանը, Էդ. Զոհրաբյանն իրավացիորեն շեշտում է, որ ժամանակի պայմաններում «քեմալական հայատյացներին զսպել կարող էր միայն ուժը, ռեալ ուժը, միմիայն ռեալ ուժի առկայությունը կարող էր նրանց հարկադրել ճանաչելու կենսունակ Հայաստանի գոյությունը և համաձայնելու նստել բանակցությունների սեղանի շուրջ՝ սահմանների արդարացի լուծման համար»: Այնինչ, հեղինակի դիպուկ գնահատմամբ, «Հայաստանը թուրքերին հարկադրելու չափ ուժ չուներ, իսկ Անտանտի դաշնակիցներն էլ նրա համար ոչ մի զինվոր զոհաբերելու պատրաստակամություն չէին ցուցաբերում, ինչը հրաշալիորեն հասկացել էին քեմալականները, բայց ոչ՝ Հայաստանի ղեկավարները»:[46]

Թեմային առնչվող ռազմաքաղաքական և դիվանագիտական հարցերի վերլուծումը Էդ. Զոհրաբյանը կատարել է համոզիչ պատմագիտական և մեթոդական սկզբունքներով: Պատերազմին նախորդած դիվանագիտական կարևոր իրադարձություններից էր Լ.Շանթի պատվիրակության միսիան Մոսկվա և 1920թ. ամռանը Ռուսաստանի պատվիրակության հետ նրա ունեցած բանակցությունները: Էդ. Զոհրաբյանը շատ հանգամանալից ներկայացնում և խորությամբ վերլուծում է այդ հարցը:[47] Ներկայացնելով կողմերի հետապնդած նպատակները և դիրքորոշումները՝ հեղինակն արդարացիորեն քննադատում և մերժում է հայ պատմագիտության մեջ «քաղաքացիության իրավունք ստացած» այն տեսակետը, համաձայն որի, Մոսկվայի բանակցությունները ձախողվել են բացառապես Շանթի պատվիրակության անհաշտ դիրքի պատճառով՝ գտնելով որ այն «չի համապատասխանում իրականությանը»: Միաժամանակ, նա օբյեկտիվորեն քննադատում է Լ.Շանթ դիվանագետի գործելակերպը, որն օժտված չէր «իրադրությունը ճիշտ գնահատելու և արագ կողմնորոշվելու ունակությամբ, ճկունությամբ, սառը դատողությամբ և սթափ հաշվարկով»: Ըստ այդմ, նա կարծում է, որ հանրապետության կառավարությունը կամ սխալվել էր Շանթին նշանակելով կամ էլ սկզբից նրան այդ ուղղությամբ էր հրահանգել, այսինքն, կառավարությունն Արևմտահայաստանի մասին բանակ-

[44] Նույն տեղում, էջ 23-28:
[45] Նույն տեղում,էջ 40-42:
[46] Նույն տեղում, էջ 43-46:
[47] Նույն տեղում, էջ 47-77:

ցություններ վարելու լիազորություն նրան չէր տվել: Այսուհանդերձ, Էդ. Զոհրաբյանը դժվարանում է կառավարությանը նման դիրքորոշման համար մեղադրել «հատկապես նկատի առնելով ստորագրվելիք Սևրի պայմանագիրը»: Նա գտնում է, որ հայկական հարցի լուծման գործում «ամբողջովին դեպի Արևմուտք կողմնորոշվելը և Ռուսաստանին հաշվից դուրս գցելը, անկասկած, սխալ կլիներ, մանավանդ որ Ադրբեջանի խորհրդայնացումից և այնտեղ 11-րդ Կարմիր բանակի կենտրոնացումից հետո նա դարձել էր տարածաշրջանի ամենազդեցիկ ուժը»: Անդրադառնալով հարցի պատմագրությանը՝ Էդ. Զոհրաբյանը ճիշտ է նշում, որ խորհրդային պատմաբաններն անխտիր, ինչպես նաև սփյուռքահայ որոշ ուսումնասիրողներ, անվերապահորեն պնդում են և այն էլ՝ «առանց լրջորեն հիմնավորված փաստարկների», թե բանակցությունների ձախողման ու հայ-ռուսական պայմանագիրը չստորագրելու համար մեղավոր են միմիայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Շանթի պատվիրակությունը, որ եթե նրանք որոշ զիջումներ անեին և ընդունեին Ռուսաստանի միջնորդությունը, ապա Հայաստանը կներառեր Կարսը, Սարիղամիշը, Արդահանը, և արևմտահայ որոշ նահանգներ: Մյուս կողմից, նա տեղին քննադատում է Հ.Օհանջանյանի կառավարությանը, որը «զուրկ էր իրատեսությունից, տարված իլյուզիաներով, չէր փորձում հավասարակշռված քաղաքականություն վարել, անվերապահորեն անձնատուր էր եղել Արևմուտքին»:[48]

Հեղինակը կարևոր նշանակություն է տալիս թուրք-հայկական պատերազմի դիվանագիտական նախապատրաստության վերլուծմանը: Նա հանգամանալից ներկայացնում է Բ.Լեգրանի միսիայի գործունեությունը, և այդ համատեքստում Ռուսաստանի դիրքորոշումը: Հետաքրքիր է Ս.Օրջոնիկիձեի գործելակերպի, ադրբեջանամետ կեցվածքի և ընդդեմ Հայաստանի արտահայտվելու նրա գծի միանգամայն նորովի ներկայացումը:[49]

Ուշագրավ պետք է համարել հայ բոլշևիկների դիրքորոշման քննադատությունը, քանզի վերջիններս անվերապահորեն բռնել էին Ադրբեջանի կողմը: Այդ հանգամանքը հեղինակը բացատրում է նրանով, որ նրանք կենտրոնացել ու գործում էին Բաքվում և «հետևապես, կամա թե ակամա պետք է կրեին Նարիմանովի և նրա խմբի ազդեցությունը, դառնային նրա կամակատարը»: Հայաստանի խորհրդայնացումը նրանք համարում էին իրենց «կյանքի նպատակը, գերխնդիրը», իսկ հայ-ռուսական հարաբերությունների կարգավորումը սպասվող պատերազմի նախօրեին անորոշ ժամանակով «հեռացնում էր Հայաստանի խորհրդայնացումը և երկարաձգում դաշնակցության տիրապետությունը»: Սրանից զատ, նրանց մեծ մասը «Հայաստանյան ծագում» չունեին, նրանց քիչ էին հասկանալի հայ մարդու մտածելակերպը, ձգտումները, ազգային խնդիրները: Այսինքն, Էդ.Զոհրաբյանի եզրակացությամբ. «Այստեղից էլ նրանց քամահրանքը և անպատասխանատու վերաբերմունքը հողային-տարածքային հարցերի նկատմամբ»: Միաժամանակ, պետք է համաձայնվել հեղինակի այն մտքին, որ նման մտածելակերպը հատկանշական չէր բոլոր հայ կոմունիստներին:[50]

Հեղինակի ուշադրության կենտրոնում է եղել նաև 1920թ. ամռան վերջին Թիֆլիսում ընթացած հայ-ռուսական բանակցությունների հարցը, որոնց

---

[48] Նույն տեղում, էջ 57-61:
[49] Նույն տեղում, էջ 103-106:
[50] Նույն տեղում, էջ 110-112:

արդյունքը օգոստոսի 10-ին կնքված համաձայնագիրն էր: Ընդունելի է նրա այն կարծիքը, որ այդ համաձայնագիրը հանրապետության համար դիվանագիտական հաջողություն համարել չի կարելի, քանզի չգոհացրեց ոչ միայն Հայաստանին, այլև մյուսներին: Էդ.Զոհրաբյանը ներկայացրել է նաև 1920թ. ամռանը Մոսկվայում կայացած ռուս-թուրքական բանակցությունները, Հայաստանի հանդեպ Բեքիր Սամի բեյի որդեգրած անհաշտ դիրքորոշումը, ինչն անմիջականորեն շաղկապվում է թուրք-հայկական պատերազմի «լինել-չլինելու» վճռի կայացման հետ:[51]

Աշխատության երկրորդ մասի առաջին գլխում Էդ.Զոհրաբյանը անդրադառնում է թուրք-հայկական պատերազմի սեպտեմբեր-հոկտեմբեր փուլին և այդ կապակցությամբ Անտանտի տերությունների դիրքորոշմանը: Նկատի ունենալով պատերազմը սկսվելու վերաբերյալ սկզբնաղբյուրների հաղորդած տարբեր տվյալները և պատմագիտության մեջ առկա մի քանի ժամկետները՝ հեղինակը համեմատական վերլուծությամբ ապացուցում է սեպտեմբերի 23-ի լույս 24-ի տարբերակը:[52]

Կարևոր պետք է համարել երկու կողմերի զինուժերի հարաբերակցության քննարկումը: Այդ հարցի մասին ևս պատմագիտության մեջ եղած կարծիքները միանշանակ չեն:[53] Հեղինակը մանրամասն ներկայացրել է կռվող կողմերի զորքերի քանակների ու կազմի տարբեր տվյալները և համոզված ապացուցել թուրքական կողմի գերակշռությունը՝ քանակական առումով: Պետք է համաձայնվել հեղինակի այն մտքի հետ, որ «հայկական հրամանատարությունը ռեալ պատկերացում չուներ» թուրքական ուժերի մասին, նույնիսկ չգիտեր, «թե ինչ է կատարվում սահմանից այն կողմ»:[54] Էդ.Զոհրաբյանը քննադատում է գրականության մեջ հաճախ հանդիպող այն միտքը, որ հայկական բանակը քանակով և զենքով գերազանցել է թուրքերին: Մինչդեռ, փաստ է, որ քեմալական բանակն «ամեն տեսակետներից» գերազանցել է հայկականին:

Հեղինակը, տարբեր փաստեր շրջանառության մեջ դնելով, եզրահանգում է, որ ԱՄՆ-ը և եվրոպական երկրները «ոչ թե չէին կարող, այլ չէին ցանկանում» օգնել Հայաստանին: Քննադատության սուր սլաքը նա ուղղում է հատկապես Անգլիայի և Ֆրանսիայի դեմ: Ինչ վերաբերում է Ռուսաստանի դիրքորոշմանը, ապա հեղինակի համոզմամբ, նրան «ավելի շատ հետաքրքրում էր Արևմուտքի հետ քեմալականների որևէ մերձեցում թույլ չտալու, Հայաստանի տարածքով դեպի Թուրքիա տրանզիտի իրավունք ստանալու և Հայաստանին Անտանտից կտրելու հարցը»: Մյուս կողմից, ուշագրավ և լրիվ ընդունելի է Էդ.Զոհրաբյանի այն տեսակետը, որ հոկտեմբերին քեմալականներն արդեն համոզվել էին, որ «Անտանտը ոչ միայն չի միջամտի և որևէ տեղում դեսանտ ափ չի հանի, այլև հայտնի չափով նաև կխրախուսի թուրքական առաջխաղացումը՝ հույս ունենալով, որ, ի վերջո, դա կհանգեցնի թուրք-խորհրդային ընդհարմանը»:[55]

Քննադատելով արտաքին ուժերի ունեցած բացասական դիրքորոշումը՝ հեղինակը միաժամանակ արդարացի քննադատում է նաև Հ.Օհանջանյանի կառավարության վարած արտաքին քաղաքականությունը, որը նրա կարծիքով, «առանձնապես ճկուն ու հեռատես չի եղել և չի կարողացել հանրապետության ղեկն այնպես վարել, որ նրան հեռու պահեր նորանոր աղետներից ու

---

[51] Նույն տեղում, էջ 120-149:
[52] Նույն տեղում, էջ 160-166:
[53] Նույն տեղում, էջ 166-172:
[54] Նույն տեղում, էջ 173:
[55] Նույն տեղում, էջ 204, 206, 209-210:

ողբերգություններից», իսկ Հանրապետության կառավարությունը «ոչ միայն չկանխատեսեց վտանգը, այլև լուրջ նշանակություն չտվեց քեմալական շարժմանը»: Այս առթիվ հեղինակը մանրամասն ներկայացնում է Բ.Լեզրանի և Լ.Շանթի պատվիրակությունների՝ Երևանում կայացած բանակցությունները, տալիս 1920թ. հոկտեմբերի 28-ի համաձայնագրի նախագծի վերլուծությունը:[56]

Աշխատությունում հանգամանալից ներկայացվում են պատերազմի ավարտական փուլը և Հայաստանի դիվանագիտական ու ռազմական պարտության բոլոր պարագաները[57]. Այստեղ ևս նա հիմնական ուշադրությունը դարձնում է վիճահարույց խնդիրների պարզաբանմանը և վերլուծմանը: Նման հարցերից է Կարսը առանց կռվի հանձնելու գործոնը: Անդրադառնալով եղած տեսակետներին՝ Էդ. Զոհրաբյանը միանգամայն համոզված չեչտում է, որ «պետք է խոսել ոչ թե չկռվելու, այլ վատ, անկազմակերպ կռվելու մասին, որի մեղքը, հասկանալի է, ոչ թե զինվորներինն էր, այլ հրամանատարությանը»[58]. Հարկ է նշել, որ հեղինակի այս կարծիքն անվերապահորեն և միանշանակ չի կարելի ընդունել: Էդ. Զոհրաբյանը հայկական բանակի պարտության գործում բոլշևիկյան պրոպագանդի առթիվ գտնում է, որ այն վճռական դեր չէր կարող խաղալ[59]: Նա ներկայացնում է Կարսի անկման և պատերազմում Հանրապետության պարտության հետևյալ պատճառները. թուրքական զորքերի քանակական, բարոյահոգեբանական, մարտական պատրաստվածության և կոփվածության մակարդակի գերազանցությունը հայկականի համեմատ, հրամանատարության՝ իր բարձրության վրա չգտնվելը, մարտիկների ցածր հայրենասիրական և բարոյահոգեբանական դաստիարակությունը, նրանց և տեղական իշխանությունների անբարյացակամ հարաբերությունները, վատ հետախուզությունը[60]:

Հեղինակը հանգամանալից վերլուծում է նաև թուրքերի՝ Արարատյան դաշտ չներխուժելու պատճառները: Նա գտնում է, որ քեմալականները քաջ գիտակցում էին, որ Հայկական հարցը, այնուամենայնիվ, միջազգային հարց է, և որ Հայաստանի հարցում նրանք չէին կարող հաշվի չնստել նաև խորհրդային կառավարության դիրքորոշման հետ[61]:

Ամփոփելով նշենք, որ Էդ.Զոհրաբյանի այս աշխատությունն իրոք թուրք-հայկական պատերազմի մասին հայ պատմագիտության ամենից համակարգված և միանգամայն հաջողված աշխատանքներից է:

Աներկբայորեն, թուրք-հայկական պատերազմի պատմությունն ու նրա դասերն ուսանելի և կարևոր են ոչ միայն պատմագիտական, այլև արդի քաղաքական իրավիճակի անաչառ գնահատման տեսանկյունից: Գաղտնիք չէ, որ պատմությունը շատ հաճախ սիրում է կրկնվել: Զարմանալի է, սակայն, որ թուրք-հայկական պատերազմի պատմությունը ցավալիորեն մինչև վերջերս ընդհանրացված և խոր ուսումնասիրության չի ենթարկվել՝ չհաշված առանձին բացառությունները: Այս պարագան հայ պատմագիտության նկատելի բացթողումներից էր: Մինչդեռ, այդ պատերազմի պատմության հետազոտությունը, նկատի ունենալով դրա կարևորությունն ու նշանակությունը,

---

[56] Նույն տեղում, էջ 216-239:
[57] Նույն տեղում, էջ 242-355:
[58] Նույն տեղում, էջ 263-266:
[59] Նույն տեղում, էջ 270:
[60] Նույն տեղում, էջ 271-72, 347-55:
[61] Նույն տեղում, էջ 328-334:

անհրաժեշտաբար պետք է ուսումնասիրողների ուշադրության առարկաներից մեկը լիներ:

Կրկին նշենք, որ քեմալական շարժումը, որպես կանոն, դիտվում էր մինչև վերջ հեղափոխական, ազատագրական պայքար՝ ստվերում թողնելով նրա ռեակցիոն ուղղվածության վերհանումը: Ինչպես այս, այնպես էլ մյուս բոլոր հարցերին անհրաժեշտ է տալ պատշաճ պատմագիտական և քաղաքական գնահատականներ, հատկապես քեմալական շարժման պանթուրքական հայատյաց դիրքորոշման լուսաբանման առումով:

ПРОБЛЕМЫ ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 ГОДА В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

С.М.КАРЯН

Резюме

Армяно-турецкие взаимоотношения в 1919-1920 годах формировались под воздействием противоречивых военно-политических и дипломатических процессов.

Важнейшими факторами, воздействовавшими на развитие этих взаимоотношений, были: империалистические намерения кемалистского движения, наличие исторических, этнических и особенно территориальных разногласий между ними.

Турецко-армянская война 1920 года одна из трагических страниц в истории армянского народа. Этот вопрос заинтересовал исследователей уже сразу по окончании войны. Имеются многочисленные воспоминания и мемуарные работы как армянских, так и турецких авторов.

Проблема истории турецко-армянской войны в той или иной степени была освещена турецкими политическими деятелями и историками. Вопрос был исследован советскими историками в основном очень конъюнктурно и в ярко выраженном протурецком контексте.

Эта проблема была досконально исследована в армянской исторической литературе за последние годы. Кроме историографического, она имеет также важное политическое значение.